Հաստատում եմ՝

Տնօրեն՝ ________ Լ. Մանուչարյան

25. 08 2022թ.



Գորիսի Ակ. Բակունցի անվան №1 ավագ դպրոցի

օտար լեզուների մեթոդմիավորման

2022-2023 ուստարվա

տարեկան աշխատանքային պլան

ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մեթոդմիավորման գործունեության
նպատակը, խնդիրները և ուղղությունները

Մեթոդմիավորման գործունեության հիմնական նպատակը մանկավարժական կադրերի մասնագիտական կրթության և անընդմեջ մեթոդական ուսումնառության ապահովումն է միասնական որոնողական աշխատանքների միջոցով:
Մեթոդական միավորման խնդիրներն են՝

- Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը`ՀՀ ԿԳՄՆ կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան
- Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել օտար լեզուների դասավանդումը դպրոցում՝ կիրառելով դասավանդման ժամանակակից նորարարական մոտեցումներ
- Յուրաքանչյուր դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ավելի մեծ ուշադրություն դարձնել աշակերտների կիրառական և վերլուծական կարողությունների զարգացմանը՝ ի հակադրություն պարզապես փաստային գիտելիքի
- Լայնորեն օգտագործելով ուսուցման նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ զարգացնել սովորողների հետազոտական հմտությունները
  Առարկայական մասնագետների կարևորագույն խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով ուսուցման գործընթացի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր ընդունակությունների և հնարավորությունների չափով ակտիվ մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների` ՀՀ ԿԳՄՆ կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը
- Դպրոցի սովորողներին նախապատրաստել առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին` նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով
- 7. Ուսումնադաստիարակչական աշխատանքները նպատակաուղղել ա.Դաստիարակելու ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ակտիվ անձ և քաղաքացի
- բ.Բացահայտելու աշակերտների անձնային որակները և ապահովելու դասապրոցեսին մասնակցությունը
- գ.Ամրապնդելու հարգանք և հպարտություն հայրենիքի, բնության հանդեպ
- դ.Օգնել աշակերտներին կողմնորոշվելու հասարակական բազմաբնույթ հարաբերություններում
- Շարունակել աշխատանքը ուսուցիչների ինքնակրթության, ինքնազարգացման և մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ
- Օտար լեզուները առարկաները դասավանդելիս կարևորել ուսուցման բովանդակության գործնական կիրառական ուղղվածությունը

Վերոնշյալ նպատակներն ու խնդիրներն իրագործելու համար իրականացվում են աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

1. ուսումնադաստիարակչական գործունեություն

- թեմատիկ պլանավորումների կազմման ղեկավարումն ըստ ուսումնական պլանի և
ծրագրի

- անցկացնել ընթացիկ խորհրդատվություններ և անհատական պարապմունքներ ծրագրային որոշակի թեմաների շուրջ
- անցկացնել սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումներ
- ղեկավարել հետազոտական և նախագծային աշխատանքները տվյալ առարկայի
շրջանակներում և կազմակերպել դրանց շնորհանդեսը

- ամիսը մեկ անգամ, իսկ անհարաժեշտության դեպքում նաև արտահերթ, կազմակերպել մասնախմբի նիստեր, արձանագրել դրանք

2. ուսումնամեթոդական գործունեություն

- կատարելագործել սովորողների ուսման որակը
- զարգացնել մասնագիտական մակարդակը, ուսումնական առարկաների դասավանդման մակարդակը
- իրականացնել դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակումը և կատարելագործումը
- անցկացնել գիտելիքների, կարողությունների, հմտությունների հայտորոշիչ ստուգումներ, այդ թվում նաև՝ ՏՀՏ –ների կիրառմամբ
- կատարելագործել ուսումնական կաբինետների նյութատեխնիկական բազան

3. կազմակերպական-մեթոդական գործունեություն

- կազմակերպել մասնախմբերի նիստեր՝ լսելու և քննակելու մասնախմբի նախագահի և
անդամների տարեկան հաշվետվությունները

- մասնակցել կրթական կազմակերպությունների կողմից կազմակերպած աշխատանքներին, միջոցառումներին
- համագործակցել դպրոցի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ
- մասնակցել ուստարվա ընթացքում մ/մ-ն աշխատանքային պլանով նախատեսված
աշխատանքների իրականացման գործընթացին

- կազմակերպել աշխատանքներ՝ ուսուցիչների մասնագիտական վարպետության
բարձրացման ուղղությամբ

4. տեղեկատվական - վերլուծական գործունեություն

- վերլուծել կրթական գործունեության արդյունքները
- ժամանակին տեղեկացնել մ/մ անդամներին կրթական գործընթացի նոր փաստաթղթերին և փոփոխություններին, նոր ծրագրերին, տեխնոլոգիաներին, ուսումնամեթոդական ձեռնարկներին

5. խորհրդատվական գործունեություն

- ցուցաբերել բազմակողմանի օգնություն մ/մ անդամներին, ծնողներին՝ տվյալ առարկայի շրջանակում կրթական գործունեությանը վերաբերող հարցերի շուրջ

6. հայտորոշիչ գործունեություն

- անցկացնել հայտորոշում սովորողների գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների զարգացման վերաբերյալ
- համապատասխանություն ստեղծել դասավանդման գործընթացի և կանոնակարգող պահանջների միջև

7. փորձարարական – նորարարական գործունեություն

- մասնակցել նոր ծրագրերի և մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման փորձարարական աշխատանքներին

8. գիտամեթոդական գործունեություն

- մշակել և վերակառուցել ուսուցման և դաստիարակության նոր ձևեր, միջոցներ, մեթոդներ
- մասնակցել դպրոցում կազմակերպվող գիտահետազոտական գործունեությանը
- կազմակերպել սովորողների նախագծային- հետազոտական գործունեությունը

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակ. Բակունցի անվան №1 ավագ դպրոցի օտար լեզուների մեթոդական միավորման կազմի մասին

| № | ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ | ԾՆ. Թ. | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | ԴԱՍԱՎԱՆԴ. ԱՌԱՐԿԱՆ | ԱՇԽ. ՍՏԱ | ԴԱՍԱ ԺԱՄ. | ՏԱՐԱԿԱՐԳ | ՀԵՌԱԽՈՍ |
|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | ԺԸ | ՔԱՆ. | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | I | II | | |
| 1. | Սիլվա Ավետիսյան | 1961 | բարձր. | Ֆրանսերեն | 38 | 29 | | + | 094.49.84.26 |
| 2. | Հերմինե Միրզոյան | 1976 | բարձր. | Ֆրանսերեն | 22 | 32 | | - | 094.54.92.56 |
| 3. | Նազելի Սարգսյան | 1983 | բարձր. | Անգլերեն | 16 | 28 | | - | 077.00.04.84 |
| 4. | Գայանե Ապրեսյան | 1969 | բարձր. | Անգլերեն | 31 | 30 | | - | 093.34.97.93 |

| | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ | ԺԱՄԱՆԱԿ | ԿԱՏԱՐՈՂ | ԱՐԴՅՈՒՆՔ-ՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ |
|---|---|---|---|---|
| 1 | • Մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում<br>• Մ/մ կազմի հաստատում<br>• 2022-2023 ուստարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի նախագծի ուսումնասիրում<br>• Մ/մ տարեկան աշխատանքային պլանի նախագծի քննարկում<br>• Նոր ուսումնական տարվա աշխատանքները կանոնակարգող իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն<br>• Օրինակելի ուսումնական պլանի՝ պետական և դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման առաջարկությունների քննարկում | 2022թ. օգոստոս | Փոխտնօրեն, մ/մ նախագահ, անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • Դասաբաշխում<br>• Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան առարկայական ուսումնական ծրագրերի, թեմատիկ պլանների կազմման քննարկում<br>• Բանավոր, գործնական և թեմատիկ աշխատանքների քանակի հաստատում | | | |
| 2 | • Մեթոդմիավորման առարկաներին վերաբերող նոր գրքերի, պարբերականների և առանձին հոդվածների քննարկում<br>• Ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման ուղղությամբ գործողությունների քննարկում<br>• մ/մ անդամներին ուսուցչի որակավորման տարակարգի նախագծի չափանիշներին ծանոթացում<br>• 2022-2023 ուստարվա զեկուցումների ժամանակացույցի հաստատում<br>• Օրվա դասի պլանների մշակման և կազմման հարցի քննարկում<br>• Առարկայական միջոցառումներ, վիկտորինաներ ֆրանսերեն և անգլերեն ուսումնասիրողների միջև | 2022թ. սեպտեմբեր | Մ/մ նախագահ, անդամներ | |
| 3 | • Ուսուցման և դաստիարակության նոր ու | 2022թ. հոկտեմբե | մ/մ նախագահ, | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | արդյունավետ ձևերի, միջոցների, մեթոդների մշակում և վերակառուցում<br>• Գործնական աշխատանքների, բաց դասերի, ըստ առարկաների արտադասարանական միջոցառումների , առարկայական շաբաթների և այլ մեթոդական միջոցառումների կազմակերպման հարցի քննարկում<br>• Սովորողներին հանձնարարվող տնային աշխ ատանքի տեսակների հարցի քննարկում<br>• Էլեկտրոնային դասամատյանների լրացման վիճակի ուսումնասիրում | ր | անդամներ | |
| 4 | • Գնահատման մեթոդաբանության, գնահատման նոր մոտեցումների քննարկում<br>• Նախագծային աշխատանքների համար անհրաժեշտ մեթոդական, բաշխիչ նյութերի, տեսաֆիլմերի, ուսումնական գրականությամբ ապահովելու հետ առնչվող խնդիրների քննարկում<br>• Ներդպրոցական առարկայական օլիմպիադայի նախապատրաստում<br>• <<Օտար լեզուների >> առարկայի դրվածքի ուսումնասիրում | 2022թ. նոյեմբեր | մ/մ նախագահ, անդամներ | |
| 5 | • Առարկայական օլիմպիադաների դպրոցական | 2022թ. դեկտեմբե | մ/մ նախագահ, | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | փուլի արդյունքների ամփոփում<br>• 12-րդ դասարանի սովորողներին պետական ավարտական քննություններին նախապատրաստում<br>• էլեկտրոնային մատյանի գրանցումների՝ թեմատիկ պլաններին համապատասխանության ստուգում<br>• Չափորոշչային պահանջների կատարման ստուգում<br>• Դասաբաշխում | ր | անդամներ | |
| 6 | • Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում<br>• Երկրորդ կիսամյակում նախատեսված աշխատանքների քննարկում<br>• Առարկայական օլիմպիադայի տարածքային փուլին երաշխավորված աշակերտների հետ լրացուցիչ աշխատանքների կազմակերպում | 2023թ. հունվար | մ/մ նախագահ, անդամներ | |
| 7 | • Առարկայական շաբաթվա կազմակերպում <<Օտար լեզուների >> առարկայից<br>• Դասալսումների կազմակերպում<br>• Առարկայական օլիմպիադայի մարզային փուլին երաշխավորված աշակերտների հետ լրացուցիչ աշխատանքների կազմակերպում<br>• ցուցաբերել բազմակողմանի օգնություն մ/մ անդամներին, ծնողներին՝ տվյալ առարկայի շրջանակում կրթական գործունեությանը վերաբերող | 2023թ. փետրվար | մ/մ նախագահ, անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հարցերի շուրջ<br>• Լսել զեկուցումներ, ռեֆերատներ ինչպես առարկայական ուսուցման, այնպես էլ ժամանակակից մեթոդների մասին | | | |
| 8 | • Համալսարանական (ԵՊՀ-ի կողմից անցկացվող) օլիմպիադային մասնակցության հարցի քննարկում<br>• Քննարկում առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի մասին<br>• Աշխատանք շնորհալի երեխաների բացահայտման և նրանց ունակությունների զարգացման ուղղությամբ<br>• Բանավոր խոսքի զարգացումը օտար լեզուների դասերին /առաջարկներ/<br>• Ֆրանսախոսությունը մեր քաղաքում | 2023թ. մարտ | մ/մ նախագահ, անդամներ | |
| 9 | • 1.10-րդ,12-րդ դասարաններում <<Ֆրանսերեն, Անգլերեն>> առարկայից սովորողների առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում<br>• դասավանդման գործընթացի և կանոնակարգող պահանջների միջև համապատասխանության հարցերի ուսումնասիրում<br>• Ընթացիկ հարցեր | 2023թ. ապրիլ | մ/մ նախագահ, անդամներ | |
| 1<br>0 | • 10—րդ, 11-րդ հումանիտար և տնտեսագիտական հոսքի դասարաններում համապատասխանաբար ավարտական, փոխադրական | 2022թ. մայիս | մ/մ նախագահ, անդամներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • քննությունների քննական նյութերի /թեստերի,<br>• առաջադրանքների, տոմսերի/ կազմում և<br>• տնօրինության կողմից հաստատում<br>• Առարկայական ծրագրերի կատարման ստուգում<br>• Չափորոշչային պահանջների կատարման ստուգում | | | |
| 11 | • Փոխադրական, ավարտական քննությունների արդյունքների վերլուծություն, ամփոփում<br>• 2022-2023 ուստարում կատարած աշխատանքների վերլուծություն, ամփոփում<br>• 2022-2023 ուստարում աշակերտների առաջադիմության և որակի վերլուծություն, եզրակացությունների հանգում<br>• Ելնելով առաջադիմության և որակի վերլուծություններից՝ հաջորդ տարվա ուսումնական ծրագրերի ռազմավարության մշակում | 2023թ. հունիս | Փոխտնօրեն,մ/մ նախագահ, անդամներ | |

Օտար լեզուների մեթոդմիավորման տարեկան աշխատանքային պլանը բխում է Ակ. Բակունցի անվան N1ավագ դպրոցի 2022-2023 ուստարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից: Ըստ ամիսների՝ աշխատանքային պլանի բովանդակությունը կարող է լրացվել, վերանայվել, խորացվել: